

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրությամբ, «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքներով, «Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայով», «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայով», ՀՀ Նախագահի հրամանագրերով, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումներով, այլ իրավական ակտերով, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Վարչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը, ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը:

4. Վարչության ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1) տեղական ինքնակառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակումը.

2) վարչատարածքային արդյունավետ բաժանման ապահովումը.

3) տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականության մշակումը.

4) տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող խնդիրների բացահայտում, դրանց կարգավորմանն ուղղված միջոցառումների (այդ թվում իրավական կարգավորում պահանջող) իրականացման ապահովումը.

5) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը և այդ ծառայությունների հասանելիության ընդլայնմանն ուղղված ծրագրերի իրականացման ապահովումը,

6) լիազորությունների ապակենտրոնացման քաղաքականության և դրա իրականացման ծրագրերի մշակումը.

7) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն, իր հիմնական խնդիրներին ու նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) ապահովում է ապակենտրոնացման քաղաքականության մշակումը, վերահսկում է տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորություններ վերապահելու գործընթացը.

2) ապահովում է ՀՀ վարչատարածքային բաժանման կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների նախագծերի մշակումը (համայնքների, համայնքների կազմի մեջ ներառված բնակավայրերի, համայնքների վարչական սահմանների մասով).

3) ապահովում է պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքներին փոխանցելու վերաբերյալ առաջարկությունների մշակումը և դրանք օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացումը.

4) ապահովում է միջհամայնքային միավորումներ ստեղծելու (կամ լուծարելու) վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը և դրանց սահմանված կարգով ներկայացումը.

5) ապահովում է համայնքների կողմից պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման վերաբերյալ պաշտոնական եզրակացությունների մշակումը և դրանք սահմանված կարգով համապատասխան մարմիններին ներկայացումը.

6) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններ նշանակելու, անցկացնելու և ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի նախապատրաստումը և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացումը, ընդունված որոշման մասին համապատասխան մարմիններին ծանուցումը.

7) ապահովում է «Համայնքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծերի սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացումը, ընդունված որոշումների մասին համապատասխան մարմիններին ծանուցումը.

8) ապահովում է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների գործընթացի կազմակերպման աջակցությունը.

9) ապահովում է «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» աշխատանքների կազմակերպումը.

10) ապահովում է ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման վարձակալության և կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրման համաձայնեցումը.

11) ապահովում է պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների իրականացման չափորոշիչների, դրանց իրականացման և ֆինանսավորման կարգերի մշակումը, իսկ դրանց հաստատման դեպքում վերահսկում է այդ գործընթացը.

12) ապահովում է ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին համայնքների սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

13) ապահովում է «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիա»-ից բխող, Վարչության իրավասությունների շրջանակում գործառնությունների կատարումը.

14) ապահովում է «Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի»-ից բխող, Վարչության իրավասությունների շրջանակում գործառնությունների կատարումը.

15) ապահովում է «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության Ազգային համակարգողի գործառույթների իրականացումը.

16) ապահովում է «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրից բխող գործառույթների իրականացումը.

17) ապահովում է Եվրոպայի Խորհրդի տեղական ժողովրդավարությանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև հետմոնիթորինգային հանձնարարականների վերաբերյալ պարբերական գեկույցների ներկայացումը.

18) ապահովում է համայնքների զարգացման ծրագրերի մշակման մեթոդաբանությունը, և իրականացնում է մոնիտորինգ դրանց իրականացման նկատմամբ.

19) ապահովում է համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման, ինչպես նաև դրանց նկատմամբ մոնիտորինգի իրականացման աշխատանքները.

20) ապահովում է համայնքներում փառատոների կազմակերպման և իրականացման համակարգման աշխատանքները.

21) ապահովում է համայնքների տնտեսական զարգացման տեսլականի մշակման աշխատանքներին աջակցությունը.

22) ապահովում է համայնքային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.

23) ապահովում է վարչատարածքային բարեփոխումների ծրագրում ներգրավված միջազգային կազմակերպությունների աշխատանքների համակարգումը.

24) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններից սրանց գործունեության առանձին ուղղությունների վերաբերյալ ընթացիկ տեղեկատվության և հաշվետվությունների ստացումը.

25) ապահովում է տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, դրանց սահմանված կարգով համաձայնեցումը իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի մասին համապատասխան առաջարկությունների նախապատրաստումը.

26) ապահովում է Վարչության Բաժինների կողմից՝ Նախարարության պաշտոնական ինտերնետային էջում տեղադրելու նպատակով՝ տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող նյութերի տրամադրումը.

27) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմիններում շահագործվող կառավարման տեղեկատվական համակարգերի և համայնքների պաշտոնական կայքերի գրանցամատյանների վարման աշխատանքների համակարգումը, ոլորտի քաղաքականության մշակումը և գործընթացի մշտադիտարկումը.

28) ապահովում է համայնքապետարանների կողմից իրականացվող Էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգումը,

29) ապահովում է համայնքների ավագանու նիստերի՝ համացանցում առցանց հեռարձակումների գործընթացի համակարգումը,

30) ապահովում է հանրային ծառայությունների տրամադրման համայնքային միասնական կենտրոնների գործունեության մշտադիտարկումների անցկացումը, դրանց հիման վրա ամփոփ վերլուծական նյութերի նախապատրաստումը,

31) ապահովում է տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն անհրաժեշտ և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը,

32) ապահովում է համայնքների կողմից արտաբյուջետային գանձապետական հաշիվներ բացելու վերաբերյալ պաշտոնական եզրակացությունների մշակումը և դրանք սահմանված կարգով համապատասխան մարմիններին ներկայացումը.

33) ապահովում է համայնքներին յուրաքանչյուր տարի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրումը և ամփոփումը.

34) ապահովում է համայնքներին պետական բյուջեից բյուջետային փոխատվություններ, վարկեր, երաշխիքներ տրամադրելու վերաբերյալ նախագծերի և պաշտոնական եզրակացությունների մշակումը և դրանք սահմանված կարգով համապատասխան մարմիններին ներկայացումը.

35) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը վերաբերվող քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) սահմանված կարգով քննարկումը.

36) ապահովում է ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրերով նախատեսված միջոցառումների պահանջների կատարումը.

37) վարում է տարատեսակ տեղեկատվական շտեմարաններ.

38) ապահովում է իրավական այլ ակտերով սահմանված Վարչության այլ գործառնություններ իրականացնումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչությունը կառավարում է Նախարարը:

8. Վարչության աշխատանքների համակարգումը իրականացնում է Նախարարը:

Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը, որը քաղաքացիական ծառայող է: Վարչության պետը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

9. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառնությունների իրականացման համար:

10. Վարչության պետը հաշվետու է Նախարարին:

11. Վարչության պետը՝

1) ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը.

2) տալիս է ցուցումներ և հանձնարարականներ.

3) պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն Նախարարին կամ Գլխավոր քարտուղարին՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

4) ներկայացնում է առաջարկություններ Նախարարին կամ Գլխավոր քարտուղարին՝ Վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ.

5) ապահովում է Նախարարի հրամանների և ցուցումների, ինչպես նաև Նախարարության գլխավոր քարտուղարի՝ ցուցումների, հանձնարարականների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում է այդ պաշտոնատար անձանց.

6) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

7) ընդունում է Վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության արդյունքները.

8) սահմանում է աշխատանքի բաշխում աշխատողների միջև.

9) Գլխավոր քարտուղարին և ներկայացնում Վարչության աշխատանքային ծրագրերը.

10) ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

11) Վարչության լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

12) Վարչության առջև դրված գործառնությունների իրականացման հետ կապված՝ Նախարարի կամ Գլխավոր քարտուղարի գիտությամբ, կարող է հրավիրել խորհրդակցություններ, դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների.

13) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով նախատեսված այլ լիազորություններ:

12. Վարչության պետի և Վարչության քաղաքացիական ծառայողների իրավունքները և պարտականությունները, նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջները սահմանվում են քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ, քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների պաշտոնի անձնագրերով և սույն կանոնադրությամբ:

13. Վարչության պետի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է բաժինների պետերից մեկը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Վարչության աշխատանքները կազմակերպվում են ներքին կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

15. Վարչությունն ունի հետևյալ ներքին կառուցվածքային ստորաբաժանումները՝

1) տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժին.

2) համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժին:

16. Տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժինը (այսուհետ՝ Բաժին), Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) կազմակերպում է ապակենտրոնացման քաղաքականության մշակումը, վերահսկում է տեղական ինքնակառավարման մարմիններին նոր լիազորություններ վերապահելու գործընթացը.

2) կազմակերպում է ՀՀ վարչատարածքային բաժանման կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների նախագծերի մշակումը (համայնքների, համայնքների կազմի մեջ ներառված բնակավայրերի, համայնքների վարչական սահմանների մասով).

3) կազմակերպում է միջհամայնքային միավորումներ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը և դրանց ստեղծման աշխատանքների խրախուսման նպատակով համայնքի ղեկավարներին ապահովում է անհրաժեշտ տեղեկատվությամբ.

4) կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրություններ նշանակելու, անցկացնելու և ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի նախապատրաստումը և սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացումը, ընդունված որոշման մասին համապատասխան մարմիններին ծանուցումը.

5) կազմակերպում է «Համայնքի վարչական տարածքում գտնվող՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության համապատասխան որոշումների նախագծերի

սահմանված կարգով ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացումը, ընդունված որոշումների մասին համապատասխան մարմիններին ծանուցումը.

6) կազմակերպում է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների գործընթացի կազմակերպման աջակցությունը.

7) կազմակերպում է «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» աշխատանքների նախապատրաստումը.

8) կազմակերպում է ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման վարձակալության և կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրման համաձայնեցումը.

9) կազմակերպում է պետության կողմից համայնքների ղեկավարներին պատվիրակված լիազորությունների իրականացման չափորոշիչների, դրանց իրականացման և ֆինանսավորման կարգերի մշակումը, իսկ դրանց հաստատման դեպքում վերահսկում է այդ գործընթացը.

10) կազմակերպում է «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիա»-ից բխող, Բաժնի իրավասությունների շրջանակում գործառույթների կատարումը.

11) կազմակերպում է «Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի»-ից բխող, Վարչության իրավասությունների շրջանակում գործառույթների կատարումը.

12) կազմակերպում է «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության Ազգային համակարգողի գործառույթների իրականացումը.

13) կազմակերպում է Եվրոպայի Խորհրդի տեղական ժողովրդավարությանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև հետմոնիթորինգային հանձնարարականների վերաբերյալ պարբերական զեկույցների ներկայացումը.

14) կազմակերպում է համայնքներում փառատոների կազմակերպման և իրականացման համակարգման աշխատանքները.

15) կազմակերպում է վարչատարածքային բարեփոխումների ծրագրում ներգրավված միջազգային կազմակերպությունների աշխատանքների համակարգումը.

16) կազմակերպում է ՀՀ կառավարությանը, ՀՀ վարչապետին համայնքների սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերվող անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը.

17) կազմակերպում է Նախարարության պաշտոնական ինտերնետային էջում տեղադրելու նպատակով՝ տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող նյութերի տրամադրումը.

18) կազմակերպում է տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, դրանց սահմանված կարգով համաձայնեցումն իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի մասին համապատասխան առաջարկությունների նախապատրաստումը.

19) Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է Նախարարի, ինչպես նաև Վարչության պետի մոտ անցկացվող խորհրդակցությունները, հանդիպումները, դրանց արձանագրությունների կազմումը և հանձնարարականների կատարման վերահսկողությունը.

20) կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը վերաբերվող քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) սահմանված կարգով քննարկումը.

21) վարում է տարատեսակ տեղեկատվական շտեմարաններ.

17. Տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժինը ղեկավարում է բաժնի պետը, որը քաղաքացիական ծառայող է և պաշտոնի նշանակվում ու պաշտոնից ազատվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

18. Տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

19. Համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժինը, Վարչության խնդիրներին և նպատակներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմիններում շահագործվող կառավարման տեղեկատվական համակարգերի և համայնքների պաշտոնական կայքերի գրանցամատյանների վարման աշխատանքների համակարգումը, ոլորտի քաղաքականության մշակումը և գործընթացի մշտադիտարկումը.

2) կազմակերպում է համայնքապետարանների կողմից իրականացվող էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգումը,

3) կազմակերպում է համայնքների ավագանու նիստերի՝ համացանցում առցանց հեռարձակումների գործընթացի համակարգումը,

4) կազմակերպում է հանրային ծառայությունների տրամադրման համայնքային միասնական կենտրոնների գործունեության մշտադիտարկումների անցկացումը, դրանց հիման վրա ամփոփ վերլուծական նյութերի նախապատրաստումը,

5) կազմակերպում է տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարմանն անհրաժեշտ և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող աշխատանքների համակարգումը,

6) կազմակերպում է համայնքներին յուրաքանչյուր տարի ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրումը և ամփոփումը.

7) կազմակերպում է պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքներին փոխանցելու վերաբերյալ առաջարկությունների մշակումը և օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում ՀՀ կառավարության քննարկմանը.

8) կազմակերպում է համայնքների կողմից արտաբյուջետային գանձապետական հաշիվներ բացելու վերաբերյալ պաշտոնական եզրակացությունների մշակումը և ապահովում դրանց սահմանված կարգով տրամադրումը համայնքներին.

9) կազմակերպում է համայնքների կողմից պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման վերաբերյալ պաշտոնական եզրակացությունների մշակումը և դրանք սահմանված կարգով համապատասխան մարմիններին ներկայացումը.

10) կազմակերպում է համայնքներին պետական բյուջեից բյուջետային փոխատվություններ, վարկեր, երաշխիքներ տրամադրելու վերաբերյալ նախագծերի և պաշտոնական եզրակացությունների մշակումը և դրանք սահմանված կարգով համապատասխան մարմիններին ներկայացումը.

11) կազմակերպում է համայնքների զարգացման ծրագրերի մշակման մեթոդաբանությունը և իրականացնում է մոնիտորինգ դրանց իրականացման նկատմամբ.

12) կազմակերպում է համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման, ինչպես նաև դրանց նկատմամբ մոնիտորինգի իրականացման աշխատանքները.

13) կազմակերպում է «Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» ծրագրից բխող գործառնությունների իրականացումը.

14) կազմակերպում է համայնքների տնտեսական զարգացման տեսլականի մշակման աշխատանքներին աջակցությունը.

15) կազմակերպում է համայնքային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը.

16) կազմակերպում է Նախարարության պաշտոնական ինտերնետային էջում տեղադրելու նպատակով՝ տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող կյուբերի տրամադրումը.

17) կազմակերպում է տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը, դրանց սահմանված կարգով համաձայնեցումը իրավասու մարմինների հետ, ինչպես նաև Նախարարության կարծիքին կամ համաձայնեցմանը ներկայացված իրավական ակտերի մասին համապատասխան առաջարկությունների նախապատրաստումը.

18) Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպում է Վարչության պետի մոտ անցկացվող խորհրդակցությունները, հանդիպումները, դրանց արձանագրությունների կազմումը և հանձնարարականների կատարման վերահսկողությունը.

19) կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը վերաբերվող քաղաքացիների նամակների (դիմումների և բողոքների) սահմանված կարգով քննարկումը.

20) վարում է տարատեսակ տեղեկատվական շտեմարաններ:

20. Համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժինը ղեկավարում է բաժնի պետը, որը քաղաքացիական ծառայող է և պաշտոնի նշանակվում ու պաշտոնից ազատվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

21. Համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը: